

Անուն-----

Թուական-----

## Հայոց Պատմութեան Գրաւոր 2

### Շրջագծէ՛ ճիշդ պատասխանը:

1-Ու՞ր կը գտնուի Բաբելոն շրջանը:

Ա-Արաքս եւ Կուր գետին միջեւ:

Բ-Եփրատ եւ Տիգրիս գետերուն միջեւ:

Գ-ճորոխ եւ Արածանի գետերուն միջեւ:

2-Ի՞նչ տեսակ երկիր էր Բաբելոնը:

Ա-դաշտային Բ-անապատային Գ-ծովային

3-Բաբելոնի հսկաները ի՞նչ կը շինէին:

Ա-աշտարակ Բ-շէնք Գ-բլուր

4-Հայկ ինչպէ՞ս կը սիրէր ապրիլ:

Ա-հնազանդելով Բ-ազատ եւ անկախ Գ-աշխատելով

5-Հայկ ուղղութեամբ գնաց:

Ա-արեւելք Բ-հարաւ Գ-հիւսիս

6-Հայկի շինած քաղաքին անունը ի՞նչ էր:

Ա-Հայկաշէն Բ-Երեւան Գ-Բաբելոն

7-Ի՞նչ տեսակ շրջան էր Հայկի գացած տեղը:

Ա-դաշտային Բ-լեռնային Գ-ծովային

8-Հայկ ի՞նչ սորվեցուց հայերուն:

Ա-ենթարկուիլ Բ-տուներ շինել Գ-պաշտպանել հայաստանը

**9-Ու՞րկէ եկած են Հայաստան եւ Հայ անունները:**

**Ա-Արամ Նահապետէն    Բ-Արա գեղեցիկէն    Գ-Հայկ Նահապետէն**

**10-Ի՞նչ կը կոչուի Նահապետ:**

**Ա-պահապան    Բ-ժողովուրդի պետ    Գ-նաւաւար**